Ինչպես բերված տվյալները ցույց են տալիս 1947 թվականի ցանքի հողամասը անհամեմատ ուժեղ է վարակված եղել թառամումով, որի հետևանքով բույսերի վարակվածության տոկոսը թառամումով ցանքի բոլոր ժամանակներում բարձր է ստացվել, սակայն այս հանգամանքը չի խանգարում նկատելու, որ 1946 թ. ապրիլի 25-ի ցանքի բույսերը 12-րդ պտղատու ճյուղերի կազմավորման շրջանում թառամումով վարակված են եղել ավելի պակաս ( $1,10\%$ ) չափով, քան հունիսի 10-ի ցանքի բույսերը

Աղյուսակ 5

Բամբակենու բույսերի թառամումով վարակվածության չափը տարբեր ժամկետների ցանքի բույսերի զարգացման միևնույն էտապներում (% %-ով)

| Ցանքի ժամանակը | 1946 թ.                      |                              |                              |                              |                                     | 1947 թ.                   |                             |                                     |
|----------------|------------------------------|------------------------------|------------------------------|------------------------------|-------------------------------------|---------------------------|-----------------------------|-------------------------------------|
|                | 12 սիմ.<br>կազմ.<br>շրջանում | 14 սիմ.<br>կազմ.<br>շրջանում | 16 սիմ.<br>կազմ.<br>շրջանում | 18 սիմ.<br>կազմ.<br>շրջանում | Կնդուղ-<br>ների<br>բացման<br>սկզբին | 50 %<br>կոկոն<br>շրջանում | 50 %<br>ծաղկման<br>շրջանում | Կնդուղ-<br>ների<br>բացման<br>սկզբին |
| 25/4           | 1,1                          | 1,8                          | 2,9                          | 6,7                          | 10,2                                | 4,2                       | 7,2                         | 84,2                                |
| 10/5           | 2,0                          | 2,9                          | 11,4                         | 13,2                         | 20,9                                | 3,7                       | 8,9                         | 71,5                                |
| 25/5           | 3,0                          | 5,4                          | 5,5                          | 9,7                          | 12,7                                | 1,7                       | 16,0                        | 96,9                                |
| 10/6           | 6,6                          | 11,2                         | 17,0                         | 23,6                         | 32,5                                | 0                         | 15,2                        | 91,9                                |

(6,6 %): Բույսերի 18-րդ պտղատու ճյուղերի կազմավորման շրջանում առաջին ժամկետի ցանքի բույսերը վարակված են եղել թառամումով 6,7%-ով, իսկ չորրորդ ժամկետի բույսերը՝ 23,6%-ով:

Նույնանման արդյունքներ են ստացվել նաև 1947 թվականի փորձում, որտեղ ապրիլի 25-ի ցանքի բույսերը 50%, ծաղկման շրջանում թառամումով վարակված են եղել 7,2%-ով, իսկ վերջին ժամկետի ցանքի բույսերը՝ 15—16%-ով:

Բամբակենու թառամման հանգեպ բույսերի դիմացկունության բարձրացմանը նպաստող պայմանները ճշգրիտ որոշելու նպատակով, մենք միաժամանակ դիտողություններ ենք տարել հիվանդության զարգացման գինամիկայի վերաբերյալ, որի ավյալները բերում ենք աղյուսակ Ա՝ 6-ում:

Աղյուսակ 6

Թառամումով վարակվածության գինամիկան տոկոսներով ըստ տարիների և ցանքի ժամկետների

| Տարի    | Ցանքի ժամանակը | Գ ի տ ող ու թ յ ա ն ժ ա մ ա ն ա կ ր |      |      |      |      |      |      |      |      |
|---------|----------------|-------------------------------------|------|------|------|------|------|------|------|------|
|         |                | 25/6                                | 7/7  | 16/7 | 20/7 | 26/7 | 10/8 | 20/8 | 25/8 | 1/9  |
| 1945 թ. | 25/4           | —                                   | —    | —    | 0,8  | —    | —    | 2,0  | —    | —    |
|         | 10/6           | —                                   | —    | —    | —    | —    | —    | —    | —    | —    |
| 1946 թ. | 25/4           | —                                   | —    | —    | 0,4  | 1,1  | 1,82 | —    | 2,97 | —    |
|         | 10/6           | —                                   | —    | —    | —    | —    | 0,69 | —    | 1,03 | —    |
| 1947 թ. | 25/4           | 4,1                                 | 6,15 | 7,2  | —    | 13,5 | 41,5 | 64,4 | —    | 84,3 |
|         | 10/6           | —                                   | —    | —    | —    | 0,43 | 15,7 | 26,2 | —    | 60,5 |

Աղյուսակ 6-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ ապրիլի 25-ի ցանքի բույսերի վրա հիվանդությունը սկսում է ավելի վաղ երևան գալ, քան ուշ ցանքի բույսերի վրա:

Այսպես, 1945 թ. ապրիլի 25-ի ցանքում սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 1-ը հիվանդ բույսերի թիվն աճել է 20%-ով, ըստ որում հիվանդության զարգացման թուխքը եղել է օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 10-ը (120%-ի աճ), իսկ հունիսի 10-ի ցանքում նույն ժամանակամիջոցում հիվանդ բույսերի թիվը աճել է 160%-ով, թուխքը եղել է հոկտեմբերի 10-ից—20-ը: Նույնանման արդյունքներ են ստացվել նաև 1946 թվականի փորձում: Ընդհանուր առմամբ 4-րդ ժամկետի ցանքի բույսերը առաջին ժամկետի համեմատությամբ 120%-ով ավել են վարակված եղել թառամումով:

Ն. Ֆ. Դրիզդորյանի ուսումնասիրությունները [6], որոնք ցույց են տալիս, որ բամբակենու բույսերի մոտ վարակի ներթափանցման ճանապարհ են հանդիսանում կոդային արմատիկները, որոնք առաջանում են մեծ մասամբ բույսի աճման շրջանում: Սրան հակառակ՝ բույսերի աճը և զարգացումը համադրածակցված ձևով բնթանալու և սնկի զարգացման ուժեղ շրջանը բույսերի աճման շրջանին չհամընկնելու դեպքում աննպաստ պայմաններ են ստեղծում հիվանդության զարգացման համար, կանխվում է ինչպես նրանց մուտքը օրգանիզմ, այնպես էլ նրանց ինտենսիվ զարգացումը: Հիվանդության գիմադրելու բնդունակությունը բարձրացման հետ միասին ավելանում է բերքատվությունը (տես նկար 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8):

Մեր հետազոտությունները ցույց տվեցին, որ ապրիլի 25-ին կատարած ցանքի պայմաններում, վաղ հասակում թառամումով վարակված բույսերի մի մասը կարճ ժամանակից հետո մասնակիորեն առողջանում են: Ապրիլի 25-ի ցանքում այդ կարգի բույսերի թիվը հասնում էր 38,8 տոկոսի: Այս ժամկետի ցանքերում հիվանդության արտաքին նշանները բույսերի վրա արտահայտվում են սովորական ձևով [3], սկզբում բույսերի ստորին ճյուղավորությունների տերևների վրա, ապա նրանք աստիճանաբար տարածվում են գեղի բույսի գագաթնային մասը: Սրան հակառակ՝ հունիսի 10-ի ցանքում թառամումը համեմատաբար կարճ ժամանակում է բնդգրկում բույսի ամբողջ վերերկրյա մասերը, որի հետևանքով հիվանդ բույսերը, մեծ մասամբ, կորցնում են իրենց կենսունակությունը և առողջանալու հնարավորությունը, չնայած նրանք լրիվ տերեփափի չեն լինում: Բացի այդ, ուշ ժամկետի ցանքում մեծ թվով բույսերի վրա հիվանդության արտաքին նշանները առաջին հերթին երևան են գալիս բույսերի գագաթնային (ծայրի) տերևների վրա, ըստ որում վերջիններս, աշնանը մուգ կարմիր գույն սեփնալու պատճառով, թառամումը դժվարությամբ է նկատվում: Այս անսովոր և հետաքրքրական երևույթը, որը հանդես է եկել ուշ ժամկետի ցանքի բույսերի մոտ, պետք է բացատրել բույսի բնույթին չհամապատասխանող արտաքին պայմանների ազդեցությամբ:

Ելնելով այն փաստից, որ ցանքի համեմատաբար վաղ ժամկետների կիրառման շնորհիվ հնարավոր է բարձրացնել բամբակենու դիմացկունությունը թառամման հանդեպ, մենք նպատակահարմար ենք համարել թառամումով ուժեղ վարակված հողամասերում բամբակի ցանք կատարել յարովիզացիայի ենթարկված սերմերով: Այդպիսի փորձ մենք գրել ենք 1949 թվականին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտում, էքսփերիմենտի Տեխնիկական կուլտուրաների գիտահետազոտական ինստիտուտի փորձագաշտում 0246 և 1298 սորտերի վրա:


Սերմերի յարովիզացիան կատարել ենք պրոֆ. Գ. Ս. Աղաջանյանի բամբակի սերմերի յարովիզացիայի վերաբերյալ մշակած մեթոդով: Սերմերը յարովիզացվել են 24—28°C ջերմության պայմաններում, 15 օր առողջությամբ: Յանքը կատարվել է ապրիլի 30-ին: Փորձը գրվել է չորս կրկնություններով: Մարզերի մեծությունը եղել է 42 քմ չնայած յարովիզացված սերմերով կատարած ցանքը կատարվել է աննպաստ պայմաններ



Տարբեր ժամկետներում կատարված բամբակի ցանքի առողջ և թառամումով հիվանդ բույսերը (25,9—1916 թ.)




Նկ. 1. 25/4 կատարված ցանքի  
առողջ բույս:



Նկ. 2. Նույն ժամկետի ցանքի  
թառամումով հիվանդ բույս:




Նկ. 3. 10/5 կատարված ցանքի  
առողջ բույս:



Նկ. 4. Նույն ժամկետի ցանքի Թառամուժով հիվանդ բույս:




Նկ. 5. 25/5 կատարված ցանքի անոզ՝ բույս:



Նկ. 6. Նույն ժամկետի ցանքի Թառամուժով հիվանդ բույս:



Նկ. 7. 10 6 կատարված ցանքի  
առողջ բույսը



Նկ. 8. Նույն ժամկետի ցանքի թափափուկ  
հիվանդ բույս

բուսմ, սակայն ստացվել է դրական արդյունք, որի տվյալները բերում ենք աղյուսակ № 7-ում:

Աղյուսակ 7-ում բերված տվյալներից երևում է, որ թառամման հանդեպ բամբակենու գիմացկունության բարձրացման տեսակետից երկու սորտի մոտ էլ (1928 և 0246) ստացվել է միանգամայն օրինաչափ տվյալներ:

Աղյուսակ 7

Ֆարովիզացված սերմերով կատարած ցանքի բույսերի թառամումով վարակվածությունը բալներով

| Սորտը | Վարիանտը     | Վարակվածության տոկոսը բալներով |      |      |      |      | Ընդհանուր վարակվածության տոկոսը | Հիվանդության պարագայման տոկոսը |
|-------|--------------|--------------------------------|------|------|------|------|---------------------------------|--------------------------------|
|       |              | 1                              | 2    | 3    | 4    | 5    |                                 |                                |
| 1928  | Ֆարովիզացված | 27                             | 24,9 | 18,1 | 14,4 | 15,5 | 49,1                            | 1,52                           |
|       | Կոնտրոլ      | 28,6                           | 23,1 | 21,7 | 10,9 | 15,8 | 57,7                            | 1,70                           |
| 0246  | Ֆարովիզացված | 9,5                            | 15,7 | 25,3 | 29,2 | 20,2 | 72,6                            | 3,4                            |
|       | Կոնտրոլ      | 7,0                            | 16,1 | 21,5 | 35,4 | 19,8 | 77,0                            | 4,0                            |

Բամբակենու 1298 սորտի յարովիզացված սերմերով կատարած ցանքի բույսերը թառամումով վարակվել են 49<sup>0</sup>/<sub>10</sub>-ով, կոնտրոլ ցանքը՝ 57,7<sup>0</sup>/<sub>10</sub>-ով: 0246 սորտի փորձնական ցանքի բույսերը վարակվել են 72,6<sup>0</sup>/<sub>10</sub>-ով, կոնտրոլ ցանքի բույսերը՝ 77<sup>0</sup>/<sub>10</sub>-ով: Այսպիսով, երկու սորտերի մոտ էլ թառամագիմացկունության բարձրացում է աեզի ունեցել, որը կազմում է 8,6—5,6<sup>0</sup>/<sub>10</sub>:

Ֆարովիզացիայի ենթարկված սերմերով կատարված բամբակի ցանքը իջեցնելով թառամումով վարակվածության ստորձանը միաժամանակ նպաստում է բերքատվության բարձրացմանը, ըստ որում երկու դեպքում էլ այդ էֆեկտը համեմատաբար բարձր է արտահայտված 1298 սորտի մոտ, թառամման հանդեպ աղելի է գիմացկուն, քան 0246 սորտը:

### Ե Ջ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Բամբակենու համեմատաբար վաղ ժամկետի (ապրիլի 25-ի) ցանքի բույսերի նորմալ աճը և զարգացումը պայմանավորող արտաքին միջավայրի պայմանների համընկնումը նպաստավոր միջավայր է ստեղծում թառամումով վարակվելու հանդեպ գիմացկունության բարձրացման տեսակետից, որի շնորհիվ սկզբնական շրջանում հիվանդացած բույսերի մի մասը (38,8<sup>0</sup>/<sub>10</sub>) հետադաշում, մասնակիորեն աուղջանում են:

2. Ցանքի տարբեր ժամկետներում աճած բույսերը միևնույն ֆազայում և միևնույն հասակում տարբեր չափով են վարակվում թառամումով, ըստ որում, ուշ ցանքի բույսերի մոտ վարակը համեմատաբար ուշ է սկսվում, սակայն հիվանդության զարգացման տեմպը արագ է ընթանում (աղյուսակ 5):

3. Ուշ ցանքի (մայիսի 25-ի, հունիսի 10-ի) պայմաններում բամբակենու աճման պրոցեսները անհամեմատ արագ են ընթանում (աղ. 4), որի հետևանքով խախտվում է բույսերի զարգացման նորմալ ընթացքը: Բամբակենու պտղատու օրգանների կազմավորման և հասունացման ուշա-

ցումը, նպաստավոր պայմաններ է ստեղծում թառամում առաջացնող սնկի ներթափանցման և ինտենսիվ զարգացման համար:

4. Բամբակենու ուշ ժամկետի (հունիսի 10-ի) ցանքի բույսերի վրա հիվանդության արտաքին նշանները մեծ մասամբ երևան են գալիս ոչ սովորական ձևով, այլ առաջին հերթին բույսերի դադաթնային (ծայրի) տերևների վրա:

5. Յարովիզացիայի ենթարկված սերմերով կատարված բամբակենու ցանքը նպաստում է բույսերի զարգացման սկզբնական ֆազերի արագ անցմանը, որի շնորհիվ թառամումով վարակվելու հանդեպ գիմացկունությունը բարձրանում է:

Հայկական ՍՍՌ ԳԱ

Բույսերի գենետիկայի

և սելեկցիայի ինստիտուտ:

Ստացվել է 20—VIII—1953 թ.

#### Գ Բ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Агаджанян Г. Х. и Кочарян А. А. Влияние сроков и норм посева на сорта озимых пшениц в разных экологических условиях Армении. Госиздат, 1946.
2. Бабаян А. А. Вопросы изучения вилта хлопчатника, 1934.
3. Геворкян Е. А. Вилтоустойчивость хлопчатника при вегетативной гибридизации. Известия АН Арм. ССР (серия биол. и сельхоз. науки), 1947.
4. Геворкян Е. А. Повышение устойчивости хлопчатника против увядания в условиях густого посева. Известия АН Арм. ССР (серии биол. и сельхоз. науки), том V, 4, 1952.
5. Григорян Г. К. К вопросу о сроках посева хлопчатника в Армянской ССР, 1947.
6. Григорян Н. Ф. Проникновение возбуждения увядания в хлопчатнике в связи с устойчивостью сортов. Известия АН Арм. ССР (серия биол. и сельхоз. науки), т. IV, 11, 1951.
7. Жуков А. Г. Сроки посевов хлопчатника по Закавказью. Вып. 32, Баку, 1933.
8. Кублановская Г. Биологический метод борьбы с увяданием хлопчатника. Журн. Сов. хлопок, 2, 1953.
9. Лысенко Т. Д. Влияние термического фактора на продолжительность фаз развития растений. Опыт со злаком и хлопчатником. Тр. Азерб. центр. оп. станции, вып. III.
10. Лысенко Т. Д. Теоретические основы яровизации. Госиздат, колхозн. и совхозн. литература, 1935.
11. Мошков Б. С. Фотопериодизм и иммунитет. ДАН СССР, т. 19, 9, 1938.
12. Нагибин Я. Д. Сроки посева и районирования сортов хлопчатника. М. Ташкент, 1934.
13. Потапенко Я. И. и Захарова Е. А. Влияние суточных колебаний температуры на развитие растений. ДАН СССР, т. 26, 3, 1940.
14. Разумов В. И. Об изменении природы растений по световой стадии развития. Журн. Яровизация, 4 (25), 1939.
15. Самыгин Г. А. Фотопериодизм растений (сводка литературы и таблицы) под ред. М. Х. Чайлахяна. Тр. Института физиологии растений им. К. А. Тимирязева, том III, 2-й выпуск, 1946.

Е. А. Геворкян

## Влияние измененных условий на устойчивость хлопчатника к увяданию

### Р е з ю м е

Мы поставили себе задачей выяснить вопрос о влиянии сроков посева на устойчивость хлопчатника к увяданию (вилт. *verticillium dahliae*).

С этой целью в 1945, 1946, 1947 и 1949 гг. мы провели опыты на сорте хлопчатника 0246 в одном из колхозов Зангибасарского района и на опытных участках Армянского Института технических культур, сильно зараженных вилтом. Посев был произведен на делянках площадью в 70 кв.м, в 4 повторностях, в 4 сроках—25 апреля, 10 и 25 мая и 10 июня.

На основании наших опытов можно прийти к следующим выводам:

1. Совпадение внешних условий, обуславливающих нормальный рост и развитие хлопчатника, создает благоприятные условия для повышения устойчивости против увядания, благодаря чему часть растений, заболевших в начале (38,8%), впоследствии часто поправляется.

2. Хлопчатник в посевах разных сроков поражается увяданием в разной степени, при одних и тех же фазах развития, причем, в поздних посевах, хотя, увядание и появляется позже, однако оно развивается быстрее (таблица 5).

3. В условиях позднего посева (25 мая, 10 июня) процессы роста и развития хлопчатника протекают значительно быстрее (табл.4), вследствие чего нарушается нормальный ход развития растений. Опоздание фазы создает благоприятные условия для проникновения в них возбудителя увядания.

4. Внешние признаки болезни в поздних (10 июня) посевах большей частью появляются не в обычном порядке, а в первую очередь на верхушечных лазах, затем постепенно распространяются в сторону нижних ярусов растений. В это время темнокрасная окраска, появившаяся на листьях, затрудняет выявление увядания.

5. Посев хлопчатника яровизированными семенами, обуславливая быстрое прохождение первых фаз развития растений, повышает устойчивость к увяданию. В этом отношении более высокий эффект получается у хлопчатника сорта 1298, который обладает большей устойчивостью к увяданию, чем сорт 0246.

Գ. Խ. Աղաջանյան, Տ. Ս. Տեր-Ստեփանյան

## ՑԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՏՈՑԻԼԻ ԲԵՐՔԻ ՔԱՆԱԿԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՎՐԱ

Կարտոֆիլի կուլտուրան ժողովրդական տնտեսության մեջ ունի բացառիկ կարևոր նշանակություն: Դա բացատրվում է նրանով, որ կարտոֆիլը տալիս է սննդի ու կերի արժեքավոր պրոդուկտ և արդյունաբերության համար կարևոր տեխնիկական հումք: Դա է պատճառը, որ մեր պարտիայի 19-րդ համագումարի որոշումներում այլ կուլտուրաների հետ միասին կարևոր ուշադրություն է դարձվում նաև կարտոֆիլի վրա: Կարտոֆիլի ցանքատարածությունների լայնացման և բերքատվության բարձրացման հարցերին խոշոր տեղ է տրված նաև ՍՍՄԽ գյուղատնտեսության հետագա զարգացման միջոցառումների մասին ՍՄԿՊ պլենումի 1953 թ. սեպտեմբերի 7-ին ընդունված որոշման մեջ, որտեղ խնդիր է դրվում «երեք տարում կարտոֆիլի և բանջարեղենի արտադրությունը հասցնել այնպիսի չափերի, որոնք լիովին բավարարեն ոչ միայն քաղաքների, արդյունաբերական կենտրոնների բնակչության, վերամշակող արդյունաբերության պահանջները, այլև անասնաբուծության կարիքները կարտոֆիլի նկատմամբ»:

Կարտոֆիլի բերքատվության բարձրացման գործում խոշոր նշանակություն ունեն՝ նրա մշակությունը լավագույն նախորդներից հետո, պարտապատճառ, աշխատանքների մեխանիզացիան, բացառապես ընտրված, առողջ, յարավիզացիայի ենթարկված և տեղական պայմաններին համապատասխանող սորտային սերմացույով ցանք կատարելը, բարձր ագրոտեխնիկայի կիրառումը, խնամքով և անկորուստ բերքահավաքը և այլն:

Տվյալ աշխատությունը նվիրված է կարտոֆիլի ագրոտեխնիկային վերաբերող մի կարևոր հարցի՝ ցանքի ժամկետների դերի քննարկմանն ու նրա անալիզին: Աշխատության մեջ շարադրված նյութը հեղինակների չորս տարվա՝ 1944—1947 թթ. գիտությունների և գիտահետազոտական աշխատանքների արդյունքն է: Ուսումնասիրությունները տարվել են Լենինականի հարթավայրի ջրովի պայմաններում՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախկին Երկրագործության ինստիտուտի փորձադաշտում:

Փորձերը գրվել են ցեխախոտազատային իննգաշտյան ցանքաշրջանառության համապատասխան դաշտերում:

Բոլոր դեպքերում փորձերը գրվել են չորս կրկնություններ: Փորձահողատարների մեծությունը տատանվել է 100—150 քառ. մետրի միջև: Փորձարկման մասնակիցել են սեկեկցիոն Կալիտինեց, Լորիս և Սևան սորտերը: Տնկումը կատարվել է 8—12 սմ խորությամբ: Տնկանյութը եղել է միջին մեծության (50—100 գրամ): Տնկվել են միանգամայն առողջ պլաների: Յուրաքանչյուր ընդամենը տնկվել է մեկ պլանը:

Դադնանի աշխատանքները կազմակերպվել և իրագործվել են այն հաշվով, որ ցանքերը միշտ փուխը և մոխրախոտերից միանգամայն մաքուր վիճակի մեջ լինեն:

Առաջին բուկիցը կատարվել է, երբ բույսերը ունեցել են 15—16 սմ բարձրություն, հրկորդը՝ դրանից 8—12 օր հետո:

1945 թ. ավյալները խոտանվել են և մեր այս աշխատության մեջ չեն րեկում:

1944 և 1946 թթ. հողի հիմնական վարր կատարվել է ապրիլի 15-ից մինչև 18-ը անիվավոր ՍՏՁ արակտորով 20—22 սմ խորությամբ: Նախա-  
ցանքային փխրեցումը կուլտիվատորով և փորձահողակտորների փոցխումն ու հողի մակերեսի թեթև հարթեցումը սովորական ատամնավոր «գլգ-զագ» փոցխով կատարվել է վարից 3—4 օր հետո: 1944 թ. հողը չի պարարտաց-  
վել, իսկ 1946 թ. պարարտացվել է, բստ որում պարարտանյութերը շաղ են արվել հողի երեսը վարելուց առաջ և վարածածկվել են հիմնական վարի ժամանակ: Պարարտացումը կատարվել է հետևյալ նորմաներով՝ սելիտրա՝ 272 կգ/հ, սուպերֆոսփատ՝ 500 կգ/հ և կալիական աղ՝ 220 կգ/հ: 1947 թ. ցանքի համար փորձահողակտորների հիմնական վարը կատարվել է թրթու-  
րավոր արակտորով 1946 թ. աշնանը 22—25 սմ խորությամբ, իսկ 1947 թ-  
զարնանը (3 4—4 4) ՍՏՁ անիվավոր արակտորով կատարվել է կրկնավար 18—20 սմ խորությամբ: Վարին զուգընթաց հողը փոցխվել է «գլգ-զագ» փոցխով երկու հետք: Պարարտացում չի արվել, որովհետև հողամասը եղել է կորնգանի տակ և ճմաշերտը օգտագործվել է միայն մեկ տարի (ցան-  
ված է եղել աշնանացան ցորեն):

Փորձարկման մեջ եղել են՝ 1944 և 1946 թթ. Լորիս և Կալիտինեց սորտերը, իսկ 1947 թ.՝ նաև Սևան սորտը:

Տնկումը 1944 թ. կատարվել է չորս ժամկետում, իսկ 1946 և 1947 թթ. 6 ժամկետներում, 15 օրը մեկ անգամ: 1947 թ. վաղ ցանքի համար գարունը նպաստավոր է եղել, ուստի և առաջին ժամկետի տնկումը պլանով նախա-  
տեսված 15/4-ի փոխարեն կատարվել է 8 4-ին: Սակայն 1944 և 1946 թթ. գարնան անբարենպաստ կլիմայական պայմանները պատճառով (անձրևա-  
յին և ցուրտ եղանակի) առաջին ժամկետի ցանքը 1944 թ. հազիվ հաջող-  
վել է կատարել 28/4, իսկ 1946 թ.՝ 23 4: Չնայած դրան Լենինականի հար-  
թավայրի պայմաններում ապրիլի երրորդ տասնօրյակի սկզբում կատա-  
րած ցանքը կարտոֆիլի համար պետք է համարել նորմալ, որովհետև այդ ժամանակ ցանած կարտոֆիլի պալարագոյացման և յուլթերի կուտակման  
ամենաինտենսիվ շրջանը համընկնում է ամենաշոգ ժամանակաշրջանին, որն ունի և՛ դրական, և՛ բացասական նշանակություն և ահա թե ինչու: Մեր չորս տարվա գիտողությունները ցույց են տվել, որ կարտոֆիլի «թառամում» ուժեղ չափով տեղի է ունենում օդի և հողի վերին շերտի (որտեղ տեղի է ունենում պալարագոյացումը) բարձր ջերմության պայ-  
մաններում: Դրան հակառակ, խոնավ և ամպամած եղանակներին և հարա-  
բերորեն պակաս ջերմության պայմաններում այդ հիվանդությունը կամ բուրդովին չի նկատվում, կամ արտահայտվում է թույլ կերպով: Այդ բա-  
նում կարելի է համագվել նաև հողի տարրեր շերտերում առաջացած պա-  
լարները միմյանց հետ համեմատելիս: Հողի վերին շերտում ամառվա չոգ ամիսներին ջերմությունը միշտ ավելի բարձր է լինում, քան քիչ թե շատ խոր շերտերում (10 սմ-ից խոր): Դրան զուգընթաց հողի վերին շերտում առաջացած պալարներն ավելի մեծ տոկոսով են թառամում, քան 10 սմ և դրանից ավելի խոր հողաշերտերում առաջացած պալարները: Այստեղից

էլ պարզ է, թե ինչու խոնավ և ոչ շատ շոգ տարիներին վաղ ցանած կարտոֆիլը տալիս է անհամեմատ ավելի քիչ չմշկված պալարներ, քան չորային և շոգ տարիներին: Միջին ժամկետներում ցանած կարտոֆիլի պալարագոյացումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ամառային շոգերն արդեն մեղմացած են լինում, և դա է պատճառը, որ այդպիսի ցանքերից ստացված պալարները հարարերորեն ավելի քիչ են հիվանդանում: Ուշ ցանքերում «թառամում» հիվանդությունն տոկոսն ավելի պակաս է լինում, սակայն պակաս է լինում նաև բերքի քանակը վեգետացիայի կրճատման հետևանքով: Այստեղից էլ դժվար է գույ ալն եզրակացություն, որ կարտոֆիլի գերվաղ և ուշ ժամկետների ցանքերը կենսականի հարթավայրի պայմաններում ցանկալի չեն, առաջինը՝ հիվանդություն րաւըր տոկոս և երկրորդը՝ պակաս բերք տալու պատճառով:

Մեր փորձերում ըստ առանձին տարիների ցանքը կատարվել է հետևյալ ժամկետներում՝

|      | 1   | 2    | 3    | 4    | 5    | 6    | 7    |
|------|-----|------|------|------|------|------|------|
| 1944 | —   | —    | 30/4 | 15/5 | 30/5 | 15/6 | —    |
| 1946 | —   | 23/4 | 30/4 | 15/5 | 30/5 | 15/6 | 30/6 |
| 1947 | 8/4 | 15/4 | 30/4 | 15/5 | 30/5 | 15/6 | —    |

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ ժամկետների ցանքերի փորձահողակտորներ, մոլախոտված և պնդացած լինելու պատճառով, ցանքից առաջ նորից փխրեցվել են, փոցխվել, սրից հետո նոր տնկվել են պալարները:

Բոլոր ժամկետների տնկումները կատարվել են 60×40 սմ խոտոթյամբ: 1944 և 1946 թվականներին մինչև մայիսի 15-ը (ներսույալ) ցանած հողարածնյակները ջրվել են երեք անգամ, իսկ մայիսի 30-ի, հունիսի 15-ի և հունիսի 30-ի ցանքերին արվել է երկու ջուր:

1947 թ. 1, 2, 3 և 4 ժամկետների ցանքերը ջրվել են 4 անգամ, իսկ վերջին երկու ժամկետների ցանքերը՝ երեք անգամ: Յուրաքանչյուր անգամ ջուրը արվել է ըստ պահանջի: Սեան և Լորիս սորտերի բոլոր ժամկետների ցանքերի և Կալիտինեց սորտի վերջին երեք ժամկետների ցանքերի բերքահավաքը կատարվել է հոկտեմբերի առաջին տասնօրյակում, իսկ Կալիտինեցի առաջին, երկրորդ և երրորդ ժամկետների ցանքերի բերքահավաքը կատարվել է սեպտեմբերի վերջին տասնօրյակում, երբ արդեն բոլոր թփերի վերերկրյա մասերը մեռած են եղել:

### Ստացված արդյունքների քննարկումը

Ամբողջ վեգետացիայի ընթացքում տարվել են ֆենոլոգիական գիտողություններ: Ստացված արդյունքներից պարզվել է, որ ըստ ցանքի առանձին ժամկետների Կալիտինեց և Լորիս սորտերի պալարները ծվել են համարյա միաժամանակ, տարբերությունը կազմել է բնդամենը 1—2 օր: Միայն 1947 թ. ապրիլի 30-ի և մայիսի 15-ի ցանքերում Կալիտինեցի պալարները 3—4 օր ավելի շուտ են ծվել, քան Լորիսի պալարները: Սակայն Սեան սորտի հետ համեմատած Լորիսի պալարները բոլոր դեպքերում ավելի շուտ են ծվել՝ այդ տարբերությունը ցանքի տարբեր ժամկետներում տատանվել է 1—3 օրվա միջև:

Ծաղկման տեսակետից Կալիտինեցի և Լորխի միջև տարբերությունը կազմել է 1—7 օր, ըստ որում ցանքի բոլոր ժամկետներում Կալիտինեցի ավելի շուտ է ծաղկել, քան Լորխը: Լորխի հետ համեմատած Սևան սորաբ 2 օր ավելի ուշ է ծաղկել, բացի 1947 թ. մայիսի 15-ի ցանքից, որտեղ այդ տարբերությունը կազմել է 4 օր:

Որքան ցանքը ուշ է կատարվել, այնքան ծլելուց մինչև ծաղկելն ավելի քիչ ժամանակամիջոց է պահանջվել: Տարբեր տարիներ, հետևաբար և տարբեր պայմաններում, այդ արագացումը տարբեր ուժով է երևան եկել, սակայն բոլոր սորտերի վերաբերյալ էլ (ինչպես վաղահաս Կալիտինեցի, այնպես էլ միջահաս Լորխ և Սևան սորտերի) ցանքի ուշացումը օրինաչափորեն առաջացրել է աճման ֆազերի տևողություն կրճատում, մի երեւիւթ, որը մեր կողմից նկատվել և արձանագրվել է նաև հացահատիկների վերաբերյալ:

Նույնպիսի օրինաչափություն նկատվել է նաև ծլման տևողության վերաբերյալ: Առաջին ժամկետների ցանքերում պալարները ծլել են ավելի ուշ այն պատճառով, որ այդ ժամանակ հողի 8—12 սմ շերտում ծլման համար պահանջվող օդախմբալ ջերմություն չի եղել, որի հետևանքով պալարների լրիվ ծլումը տեղի է ունեցել ցանքից 32—45 օր հետո միայն: Հետագայում լավացել են ջերմային պայմանները, սակայն, դրան զուգընթաց վատացել են ջրային պայմանները: Բարձրացել է հողի ջերմությունը, բայց քչացել է նրանում պարունակված ջրի պաշարը: Դրա հետևանքը եղել է այն, որ սրտշ տարիներ ավելի ուշ կատարած ցանքերում դրաձյալ նկատվել է պալարների ծլման պրոցեսի ձգձգում: Մեր փորձերում այդպիսի երեւիւթ նկատվել է 1946 թ. մայիսի 30-ի ցանքի դեպքում: Այն բոլոր դեպքերում, երբ հողում միաժամանակ ստեղծվել են և՛ ջերմային և՛ խոնավության լավագույն պայմաններ, կարտոֆիլի պալարները, անկախ սորտից, ծլել են կրկնակի անգամ ավելի շուտ:

Ցանքի ժամանակը առանձնակի մեծ ազդեցություն թողել է նաև նյութի կուտակման պրոցեսի վրա: Պալարներում օդային քանակը որոշելու և նյութի կուտակման դինամիկան պարզելու նպատակով բոլոր փորձերում տարվել է հատուկ հաշվառում: Վեգետացիայի ընթացքում այդպիսի հաշվառում տարվել է մի քանի անգամ և բոլոր սորտերի համար միաժամանակ, բացի վերջին ժամկետի հաշվառումից, որը կատարվել է յուրաքանչյուր սորտի բերքահավաքի օրը կամ նրա նախօրյակին: Աշխատել ենք անալիզների համար նմուշներ վերցնել 10 օրը մեկ անգամ, պալարների դոյացման սկզբից սկսած: Այդ աշխատանքը իրագործելու համար յուրաքանչյուր անգամ տարբեր ժամկետների ցանքերի 4-րդ կրկնողություններում հանվել է 10-ական բույս և որոշվել յուրաքանչյուր թփի տակ եղած պալարների թիվը և նրանց կշիռը: Առանձին հաշվի է առնված ամենամեծ պալարների կշիռը և ապա ամենաուժեղ և ամենաթույլ թփերի տակ եղած պալարների թիվը և նրանց կշիռը: Բոլոր դեպքերում պալարները բաժանվել են երեք ֆրակցիայի՝ փոքր (մինչև 50 գրամ), միջակ (50—100 գրամ) և մեծ (100 գրամից բարձր կշիռ ունեցող): Այդ ֆրակցիաների պալարների հաշվառումը կատարվել է առանձին-առանձին, բայց աղյուսակում այդպիսի մանրամասնություններ չեն բերվում, աշխատանքը

բազմաթիվ թվական տվյալներով չձանրարենելու համար: Որոշվել է նաև օսլայի տոկոսը պալարներում:

Ստորև 1 և 2 աղյուսակներում բերված են 1946 և 1947 թթ. այդ անալիզներից ստացված տվյալները (միջինը, վերածած մեկ թփի):

Աղյուսակ 1

Յանքի ժամանակի ազդեցությունը կարտոֆիլի պալարներում նյութերի կուտակման ղեկավարության վրա 1946 թ.

| №-ը | Յանքի ժամանակը | Անալիզ կատարելու ժամանակը | Կ ա լ ի տ ն ե ց            |                         | Լ ո ր ւ                    |                         |
|-----|----------------|---------------------------|----------------------------|-------------------------|----------------------------|-------------------------|
|     |                |                           | պալարների թիվը մեկ թփի տակ | նյութի քանակը գրամներով | պալարների թիվը մեկ թփի տակ | նյութի քանակը գրամներով |
| 1   | 23/4           | 25/7                      | 9,4                        | 312,0                   | 8,0                        | 306,5                   |
| 2   |                | 5/8                       | 9,1                        | 320,3                   | 8,7                        | 319,6                   |
| 3   |                | 15/8                      | 11,0                       | 499,9                   | 8,3                        | 368,5                   |
| 4   |                | 26/8                      | 11,2                       | 539,3                   | 9,9                        | 638,2                   |
| 5   |                | 7/9                       | 11,4                       | 538,5                   | 10,2                       | 643,5                   |
| 6   |                | 3/10                      | 11,8                       | 590,0                   | 10,9                       | 855,0                   |
| 7   | 30/4           | 25/7                      | 10,9                       | 354,2                   | 10,4                       | 304,0                   |
| 8   |                | 5/8                       | 9,8                        | 360,0                   | 10,5                       | 307,2                   |
| 9   |                | 15/8                      | 9,3                        | 410,0                   | 10,6                       | 404,5                   |
| 10  |                | 26/8                      | 10,7                       | 496,2                   | 10,9                       | 628,0                   |
| 11  |                | 7/9                       | 10,3                       | 492,8                   | 10,8                       | 642,2                   |
| 12  |                | 3/10                      | 12,7                       | 585,0                   | 12,0                       | 761,0                   |
| 13  | 15/5           | 25/7                      | 10,7                       | 303,0                   | 8,5                        | 206,0                   |
| 14  |                | 5/8                       | 10,6                       | 306,0                   | 10,8                       | 210,6                   |
| 15  |                | 15/8                      | 10,3                       | 288,5                   | 9,2                        | 287,5                   |
| 16  |                | 26/8                      | 10,4                       | 308,9                   | 10,3                       | 313,1                   |
| 17  |                | 7/9                       | 11,9                       | 302,4                   | 10,2                       | 332,0                   |
| 18  |                | 3/10                      | 11,9                       | 525,0                   | 12,2                       | 745,0                   |
| 19  | 30/5           | 25/7                      | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 20  |                | 5/8                       | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 21  |                | 15/8                      | 5,4                        | 108,0                   | 4,7                        | 101,0                   |
| 22  |                | 26/8                      | 7,2                        | 136,3                   | 7,8                        | 225,0                   |
| 23  |                | 7/9                       | 8,5                        | 183,5                   | 8,0                        | 235,0                   |
| 24  |                | 3/10                      | 8,8                        | 390,0                   | 8,6                        | 380,0                   |
| 25  | 15/6           | 25/7                      | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 26  |                | 5/8                       | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 27  |                | 15/8                      | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 28  |                | 26/8                      | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 29  |                | 7/9                       | 8,0                        | 120,6                   | 7,8                        | 328,4                   |
| 30  |                | 3/10                      | 8,1                        | 23,0                    | 8,2                        | 358,0                   |
| 31  | 30/6           | 25/7                      | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 32  |                | 5/8                       | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 33  |                | 15/8                      | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 34  |                | 26/8                      | պ ա լ ա Ր                  | չ ի ե ղ ե լ             | չ ի ե ղ ե լ                |                         |
| 35  |                | 7/9                       | 7,6                        | 135,0                   | 7,0                        | 176,0                   |
| 36  |                | 3/10                      | 7,9                        | 210,0                   | 7,2                        | 176,0                   |

Աղյուսակի տվյալներից պարզվում է հետևյալը՝

1. Կարիտինեց վաղահաս սորտի պալարներում նյութերի կուտակումը հարաբերորեն ավելի արագ տեմպով է տեղի ունեցել, քան Լորիս և Սևան սորտերի պալարներում:

Ցանքի ժամանակի ազդեցությունը կարտոֆիլի պալարներում նյութերի կուտակման զինամիկայի վրա 1947 թ. (պալարների կշիռը յուրաքանչյուր թփի տակ գրամներով)

| № №.<br>Ե/Կ | Ցանքի ժա-<br>մանակը | Անալիզ կա-<br>տարելու<br>ժամանակը | Կալիտինից     | Լ Ե Ք   | Ն<br>Կ Խ                 |
|-------------|---------------------|-----------------------------------|---------------|---------|--------------------------|
| 1           | 8/4                 | 11/7                              | 312           | 180     | 106                      |
|             |                     | 21/7                              | 355           | 185     | 181                      |
|             |                     | 31/7                              | 370           | 242     | 365                      |
|             |                     | 11/8                              | 475           | 485     | 366                      |
|             |                     | 21/8                              | 475           | 350     | 475                      |
|             |                     | 1/9                               | —             | 748     | 655                      |
|             |                     | 12/9                              | —             | 762     | 690                      |
|             |                     | 20/9                              | —             | 762     | 715                      |
| 2           | 15/4                | 11/7                              | 150           | 116     | 82                       |
|             |                     | 21/7                              | 276           | 223     | 143                      |
|             |                     | 31/7                              | 278           | 216     | 266                      |
|             |                     | 11/8                              | 303           | 312     | 293                      |
|             |                     | 21/8                              | 412           | 462     | 353                      |
|             |                     | 1/9                               | —             | 477     | 367                      |
|             |                     | 12/9                              | —             | 635     | 418                      |
|             |                     | 20/9                              | —             | 754     | 467                      |
| 3           | 30/4                | 11/7                              | 141           | 93      | 81                       |
|             |                     | 21/7                              | 216           | 155     | 152                      |
|             |                     | 31/7                              | 270           | 280     | 230                      |
|             |                     | 11/8                              | 279           | 333     | 242                      |
|             |                     | 21/8                              | 287           | 496     | 296                      |
|             |                     | 1/9                               | —             | 527     | 368                      |
|             |                     | 12/9                              | —             | 712     | 388                      |
|             |                     | 20/9                              | —             | 724     | 395                      |
| 4           | 15/5                | 11/7                              | պ ա լ ա ր չ ի | կ գ կ լ |                          |
|             |                     | 21/7                              | պ ա լ ա ր չ ի | կ գ կ լ |                          |
|             |                     | 31/7                              | 212           | 192     | 48                       |
|             |                     | 11/8                              | 225           | 279     | 110                      |
|             |                     | 21/8                              | 236           | 298     | 201                      |
|             |                     | 1/9                               | 336           | 302     | 203                      |
|             |                     | 12/9                              | 376           | 344     | 216                      |
|             |                     | 20/9                              | 524           | 378     | 246                      |
| 5           | 30/5                | 11/7                              | պ ա լ ա ր չ ի | կ գ կ լ |                          |
|             |                     | 21/7                              | պ ա լ ա ր չ ի | կ գ կ լ |                          |
|             |                     | 31/7                              | պ ա լ ա ր չ ի | կ գ կ լ |                          |
|             |                     | 11/8                              | պ ա լ ա ր չ ի | կ գ կ լ |                          |
|             |                     | 21/8                              | պ ա լ ա ր չ ի | կ գ կ լ |                          |
|             |                     | 1/9                               | 199           | 233     | հաշվառում չի<br>կատարվել |
|             |                     | 12/9                              | 274           | 295     | հաշվառում չի<br>կատարվել |
|             |                     | 20/9                              | 332           | 306     | հաշվառում չի<br>կատարվել |

2. Կալիտինեց սորտի յուրաքանչյուր թփի տակ համարյա բոլոր ժամանակներից ցանքերում և բոլոր ժամկետների տնալիզների գեպքում պալարների թիֆը ավելի մեծ է եղել, քան Լորիս սորտի թփի տակ։ Նաև մեծ է եղել այդ պալարների կշիռը վաղ և միջին ժամկետներից ցանքերում։ Նույնպիսի օրինաչափություն նկատվել է նաև Սևան սորտի նկատմամբ։

3. 1946 թ. բոլոր ժամկետների ցանքերում թեկնալիտինեց և թեկնալիտ սորտերը օգոստոսի 5-ի տնալիզների ժամանակ, չնչին բացառությամբ, ցուցաբերել են դանդաղ աճ, նմանօրինակ տեսքենց նկատվել է նաև սեպտեմբերի 7-ի տնալիզների տվյալներում: Մեր կարծիքով դա պետք է բացատրել նրանով, որ տնալիզներին նախորդող ժամանակամիջոցը, հուլիս--օգոստոս ամիսների վերջին տասնօրյակները աչքի են ընկել տեղումների առատությունից և օդի ու հողի ջերմությունից: Դրա հետևանքը եղել է այն, որ նյութերի խնամքով կուտակում պալարներում տեղի չի ունեցել, իսկ նյութերի կորուստը շնչառության միջոցով շարունակվել է, որը և առաջացրել է զուցանիշներին որոշ նվազում:

4. Ուրբան ցանքն ուշ է կատարվել, այնքան էլ պալարներն ավելի փոքր են եղել: Դա վերաբերում է ինչպես Լորխին, այնպես էլ Կալիտինեց և Սեան սորտերին:

Կարտոֆիլի բերքի որակական կարևոր ցուցանիշներից մեկն էլ (բացի կրախմալի պարունակությունից) նրա պալարների մեծությունն է: Բերքի տվյալ որակական կողմը պալարների տեսեսական օգտագործման գործում մեծական գեր ունի:

Ստորև բերված տվյալներից դժվար չէ տեսնել, որ տարբեր ժամկետներում ցանված կարտոֆիլի բերքի ստրուկտուրան խիստ փոխվում է, քանի որ փոխվում են բույսերի աճման ու զարգացման պայմանները:

Առանձին սորտերի միջև նկատված որոշակի տարբերությունը պարզորոշ կերպով երևում է ԱՆ 3 և 4 ազդուսակների տվյալներից:

### Աղյուսակ 3

Յանքի ժամանակի ազդեցությունը կարտոֆիլի պալարների կշռի վրա բերքահավաքի մոմենտին (մեկ պալարի միջին կշիռը գրամներով)

| № №<br>բ/կ | Յանքի<br>ժամանակը | 1 9 4 6 թ. |         | 1 9 4 7 թ. |         |      |
|------------|-------------------|------------|---------|------------|---------|------|
|            |                   | Կալիտինեց  | Լ. ո. խ | Կալիտինեց  | Լ. ո. խ | Սեան |
| 1          | 8/4               | —          | —       | 58,2       | 69,2    | 82,9 |
| 2          | 15/4              | —          | —       | 44,0       | 63,8    | 52,0 |
| 3          | 23/4              | 50,0       | 78,4    | —          | —       | —    |
| 4          | 30/4              | 46,1       | 63,4    | 43,4       | 60,3    | 48,3 |
| 5          | 15/5              | 44,1       | 61,1    | 39,9       | 44,3    | 33,5 |
| 6          | 30/5              | 44,3       | 44,2    | 37,7       | 40,0    | —    |
| 7          | 15/6              | 29,4       | 43,7    | —          | 33,5    | —    |
| 8          | 30/6              | 26,6       | 24,4    | —          | —       | —    |

Աղյուսակի տվյալներից դժվար չէ տեսնել, որ բոլոր սորտերի նկատմամբ որքան ցանքը ուշ է կատարվել, այնքան էլ բերքահավաքի ժամանակ պալարների միջին կշիռը միանգամայն օրինադափուրեն պակաս է եղել:

1946 թ. փորձերում պալարներն ավելի մեծ և ավելի ծանրակշիռ են եղել, քան 1947 թ. փորձերում: Դա վերաբերում է ինչպես Կալիտինեց, այնպես էլ Լորխ սորտերին:

Պալարների միջին կշիռով ամենավաղ ցանքի դեպքում (8/4) առաջին տեղը բռնել է Սևան սորտը, մնացած ժամկետների ցանքերում առաջնությունը շահել է Լորխը, երկրորդ տեղը բռնել է Կալիտինեցը: Միայն ամենավերջին ժամկետի ցանքում Կալիտինեցը այդ ցուցանիշի տեսակետից գերազանցել է Լորխին:

Աղյուսակ 4

Ցանքի ժամանակի ազդեցությունը բերքի ստրուկտուրայի վրա

| ԱՄԷ | Տարի | Ցանքի ժամանակը | Կալիտինեց    |                |               | Լ օ Ր Խ      |                |               | Ս և ան       |                |               |
|-----|------|----------------|--------------|----------------|---------------|--------------|----------------|---------------|--------------|----------------|---------------|
|     |      |                | 0/0          |                | 0/0           | 0/0          |                | 0/0           | 0/9          |                | 0/9           |
|     |      |                | մեծ պալարներ | միջակ պալարներ | մանր պալարներ | մեծ պալարներ | միջակ պալարներ | մանր պալարներ | մեծ պալարներ | միջակ պալարներ | մանր պալարներ |
| 1   | 1946 | 23/4           | 50,1         | 31,5           | 18,4          | 43,2         | 39,0           | 17,8          | —            | —              | —             |
|     |      | 30/4           | 52,5         | 27,9           | 19,6          | 37,9         | 43,9           | 18,2          | —            | —              | —             |
|     |      | 15/5           | 46,0         | 32,2           | 21,8          | 35,6         | 45,0           | 19,4          | —            | —              | —             |
|     |      | 30/5           | 36,0         | 14,0           | 50,0          | 31,0         | 19,0           | 50,0          | —            | —              | —             |
|     |      | 15/6           | 37,0         | 12,4           | 50,6          | 31,1         | 17,8           | 51,1          | —            | —              | —             |
|     |      | 30/6           | 27,2         | 12,5           | 60,3          | 31,0         | 17,1           | 51,9          | —            | —              | —             |
| 2   | 1947 | 8/4            | 59,7         | 28,3           | 12,0          | 68,5         | 22,5           | 9,0           | 63,4         | 30,3           | 6,3           |
|     |      | 15/4           | 62,3         | 25,3           | 12,4          | 66,1         | 24,5           | 9,4           | 62,7         | 32,2           | 7,1           |
|     |      | 30/4           | 56,1         | 29,8           | 14,1          | 65,2         | 24,4           | 10,4          | 61,8         | 27,1           | 11,1          |
|     |      | 15/5           | 45,2         | 40,7           | 14,1          | 65,0         | 23,8           | 11,2          | 52,0         | 31,5           | 16,5          |
|     |      | 30/5           | 41,2         | 43,4           | 15,4          | 63,8         | 22,5           | 13,7          | —            | —              | —             |
|     |      | 15/6           | 38,5         | 43,2           | 18,3          | 60,0         | 26,0           | 14,0          | —            | —              | —             |

Այս աղյուսակի տվյալներից պարզվում է հետևյալը՝

Ցանքի ուշացմանը զուգընթաց իջել է բոլոր փորձարկված սորտերի բերքի մեջ մեծ պալարների տոկոսը և դրան համապատասխան մեծացել է փոքր պալարների տոկոսը: Միջին մեծություն պալարների տոկոսը, ըստ տարիների, ենթարկվել է ուժեղ փոփոխության և որևէ օրինաչափության չի ենթարկվում:

Մանր պալարների պարունակության տեսակետից Կալիտինեց և Լորխ սորտերի միջև մեծ տարբերություններ չեն եղել: Սևան սորտի վաղ ցանքերի բերքի մեջ մանր պալարների տոկոսն անհամեմատ ավելի պակաս է եղել, քան Կալիտինեցի և Լորխի վաղ ժամկետների ցանքերի բերքի մեջ: Մայիսի ցանքերում այդ տոկոսը համարյա կրկնապատկվել է (Սևան սորտի նկատմամբ):

Սորտը պալարների տոկոսը 1947 թ. ցանքերում անհամեմատ ավելի մեծ է եղել, քան 1946 թ. ցանքերում, որը առաջին հերթին պայմանավորված է եղել վարի խորությունը և հողամասի առանձնահատկությամբ՝ կարտոֆիլը մշակվել է շուռ տված ճոճ տուփում, իսկ վարը կատարվել է 25 սմ խորությամբ:

1946 թ. բոլոր ժամկետների ցանքերում մեծ պալարների տոկոսով Կալիտինեցը գերազանցել է Լորխին, դրան հակառակ 1947 թ. այդ նույն Կալիտինեց սորտը բռնել է վերջին տեղը: Առաջին տեղը բռնել է Լորխը, երկրորդ տեղը՝ Սևան սորտը: Այդ երևույթը մենք բացատրում ենք փորձարկված սորտերի բիոլոգիական առանձնահատկությունների տարբերու-

թյամբ, նրանց տարբեր վերարերմունքով դեպի արտաքին միջավայրի պայմանները (կլիմայական և հողային):

